

## 23. First Sunday after the Assumption of the Holy Mother of God

Proverbs 11:30-12:4; Zechariah 2:10-13; 2 Corinthians 6:16-7:1; Luke 1:39-56

## 23. Ա. ԿԻՐԱԿԻ ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ԱՅԼԱՓՈԽՈՒՄԷՆ ԵՏՔ

Առակաց 11:30-12:4; Զաքարիա 2:10-13; 2 Կորնթացիներուն 6:16-7:1; Ղուկաս 1:39-56

### 2 Կորնթացիներուն 6:16-7:1

Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:

Արդարեւ, մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուած ինք ըսաւ.-

*«Անոնց մէջ պիտի բնակիմ*

*եւ անոնց հետ պիտի ապրիմ:*

*Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ*

*եւ անոնք՝ իմ ժողովուրդս»:*

Ահա թէ ինչո՛ւ Աստուած կը հրահանգէ մեզի.-

*«Անջատ եւ հեռո՛ւ կեցէք հեթանոսներէն.*

*պիղծ բաներու մի՛ դպչիք,*

*եւ ես ձեզ պիտի ընդունիմ:*

*Ես ձեզի Հայր պիտի ըլլամ*

*եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,-*

*կ'ըսէ ամենակալ Տէրը»:*

Սիրելիներ, այս խոստումները մեզի եղած են: Ուստի հեռո՛ւ մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

### Ղուկաս 1:39-56

Նոյն օրերուն, Մարիամ ճամբայ ելլելով՝ աճապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով՝ Եղիսաբեթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբեթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ, եւ Եղիսաբեթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ.

– Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեա՛լ է գաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ի՛նչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինծի կ'այցելէ. որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխասս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի՛ քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին:

Մարիամ ըսաւ.

*«Տէրը պիտի գովաբանեմ.*

Ահա հոգիս կ'ուրախանայ  
Աստուծով, իմ Փրկիչով,  
որովհետեւ ան տեսաւ  
իւր աղախինին հեգութիւնը:  
Ասկէ ետք բոլոր սերունդները  
երանի պիտի տան ինծի,  
քանի հզօրն Աստուած ինծի համար  
մեծամեծ գործեր կատարեց.  
սուրբ է անունը անոր:  
Բոլոր ժամանակներուն մէջ  
ողորմութեամբ ան կը նայի  
աստուածավախ մարդոց վրայ:  
Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ,  
ռչնչացուց հպարտները՝  
իրենց բոլոր խորհուրդներով:  
Գահազրկեց արքաները  
եւ բարձրացուց խոնարհները:  
Անօթիները բարիքներով լիացուց,  
մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց:  
Պաշտպան եղաւ իր ծառային՝ Բսրայէլի,  
հաւատարիմ մնալով իր ողորմութեան,  
ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝  
Աբրահամի եւ անոր զաւակներուն»:  
Մարիամ Եղիսաբէթի մօտ շուրջ երեք ամիս մնալէ ետք վերադարձաւ իր տունը: